

որի արգասիքն քաջ Վարդանի եւ իր ընկեր-
ների անմահ գործն եղաւ, երբ նրանք մայրենի
եկեղեցու եւ հողի համար նահատակուեցան:

Ի հարկէ այդպիսի մերձ յարաբերու-
թիւնները չէին կարող առանց մեծ ազդեցու-
թեան մնալ հայկական գրականութեան, լեզուի
եւ առհասարակ ազգային բնաւորութեան վրայ:
Դեռ քանի որ հայկական տառերը չէին գըտ-
նուած, Հայաստանի շատ տեղերում պարսկա-
կան գրերն էին գործածւում, Հայոց չաստուած-
ների շատերը Պարսից չաստուածներն էին:
Դեռ մինչեւ այսօր եւս զանազան սովորութիւն-
ների եւ տօների մէջ հեթանոս Պարսիկների
հետքը մնացել է Հայոց մէջ: Ես հաշուել եմ
մեր լեզուի մէջ մի եւ նոյն ուղղագրութիւնը,
նշանակութիւնն ունեցող մօտ երկու հարիւր
պարսիկ բառեր, զոր օրինակ՝ կանգ, սուգ,
հազար, ճրագ, բրինձ, ճար, մարգ, դուխտ,
դրախտ, խորտիկ, բազուկ, ակահ(ներհուն),
նիազ, քէշ, յաշտ, նհանգ, բախտ, ճետ, խազմ,
պարսատակ, դեւ, պանիր, թագ, գոհար, դպիր,
նկար, խմոր, (հ)ամբար, շտապ, թոնիր, հուր,
տապար, բարակ, զօր, փաշաման, եւն:

Ահա ինչ է ասում գերմանացի գիտնա-
կան Կարլ Ռիտտեր՝ իր հռչակաւոր երկրագի-
տութեան գրքի մէջ:

«Եւեւ Սասանեանք, Զրադաշտի վարդա-
պետութիւնը, ինչպէս եւ մոգութիւնը՝ առանց
ազդեցութեան չմնացին հայկական գրականու-
թեան վրայ, եւ դրա համար այն ժամանակուայ